ԼՂԻՄ. ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ

Երբ Լեռնային Ղարաբաղն այսօր լարվածության գոտի է, ապա Ստեփանակերտի ծայրամասում գտնվող Կրկժան բնակավայրը իրավամբ կարող է համարվել այդ գոտու ամենաթեժ կետերից մեկը: Այստեղ ազգամիջյան ճողի վրա հակաիրավական ձեռնարկումները ուղղակի սովորական երևույթ են դարձել: Ահա հոկտեմբերի 26-ին, մոտավորապես ժամը 21-00 րոպեին քաղաքի այդ շրջանում անհայտ անձինք հրազենով ճիգ անգամ կրակել են: Բարեբախտաբար տուժածներ չկան:

Դեռևս չի կարգավորված փոխադրամիջոցների անվտանգ երթևեկությունը իճճնավար մարզի ճանապարհներով: Հոկտեմբերի 26-ին Շուշիի շրջանի Մալիբեյլի գյուղի մոտ մի խումբ ադրբեջանցիներ քարկոծել են Մարտունու գինու գործարանին պատկանող ավտոմեքենան: Ջարդվել է առջևի ապակին:

Դրանից մի օր առաջ Մարտակերտի շրջանում Մարտակերտ—Ստեփանակերտ ճանապարհին Ղուբարլու գետակի կամուրջը պայթեցնելու փորձ է արվել: Գործի է դրվել պայթուցիկ համասարք, պայթյունի հետևանքով գոյացել է 25 սանտիմետր տրամագծով և 15 սանտիմետր խորությամբ մի ոչ մեծ ձագարաձև փոս: Սակայն մեքենաների երթևեկության համար կամուրջը պիտանի է մնացել:

Այս բոլոր փաստերի հիման վրա հետաքննություն է կատարվում:

Ինչ վերաբերում է մարզի էկոնոմիկային, ապա այն շարունակում է գտնվել ողբալի վիճակում: Վառելիքի սուր պակասը, հումքի, անհրաժեշտ նյութերի մատակարարման խոչընդոտական խափանումները ի չիք են դարձնում արտադրության աշխատողների ջանքերը: Հոկտեմբերի 26-ին քաղաքը սատացել է բնդամենը երկու ցիստեռն բենզին և դրանից մի քիչ ավելի դիզելային վառելիք, ինչպես նաև մետաղակոնստրուկցիաներ:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ

ՄԻՏԻՆԳԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ ՏՎԵՑ

Երեկ երեկոյան Ստեփանակերտի Հաղբանակի հրապարակում տեղի ունեցավ բազմահազարանոց միտինգ:

Նյույթ ունեցողները, արտահայտելով ճավաքվածների կամքը, կոլեկտիվ պատվիրաններ ներկայացրին ԼՂԻՄ-ից ընտրված իրենց դեպուտատներին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում Ղարաբաղի պրոբլեմի առաջիկա քննարկման ժամանակ հաստատակամ մնալ իրենց դիրքերում, հասնել արցախահայության արդարացի պահանջների իրագործման:

Միտինգը կոչ արեց չենթարկվել պրովոկացիաների, պահպանել զգոնությունը, պատրաստ լինել դիմակայելու ամեն մի հակաօրինական գործողության:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

1989 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանում երկրաշարժի տարելիցի կապակցությամբ Հայկական ԽՍՀ Գերագույն՝ խորհրդի նախագահությունը **որոշում է.**

1989 թվականի դեկտեմբերի 7-ը հայտարարել Երկրաշարժի զոհերի հիշատակի օր:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝ Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ

28 հոկտեմբերի 1989 թ., քաղ. Երևան